

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N 1448-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« ____ » _____ 2022թ. N ____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ
26-Ի N 1448-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և
34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի
26-ի «Քաղաքացիական և ռազմական ավիացիայի օդանավերի համատեղ
բազավորման ու համատեղ օգտագործման աերոդրոմների օգտագործման
կարգը և քաղաքացիական և ռազմական ավիացիայի օդանավերի համատեղ
բազավորման աերոդրոմների ցանկը հաստատելու մասին» N 1448-Ն որոշման
մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման նախաբանում «12-րդ հոդվածի 7-րդ կետին» բառերը փոխարինել
«12-րդ հոդվածի 9-րդ մասին» բառերով.

2) որոշման N 1 հավելվածի՝

ա. 1-ին կետի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

բ. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Անկախ աերոդրոմի պատկանելությունից՝ քաղաքացիական օդանավերով
միջազգային կանոնավոր առևտրային և (կամ) ներքին կանոնավոր
առևտրային օդային փոխադրումներ կարող են իրականացվել, եթե
Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝

1) աներողրոմը հանդիսանում է կառավարվող և ապահովված է օդային երթևեկության (անրոնավիգացիոն) սպասարկման անրողրոմային և անրողրոմին մոտեցման կարգավարական ծառայություններով.

2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 27-ի թիվ 68-Ն հրամանով սահմանված կարգով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից անրողրոմին տրամադրվել է սերտիֆիկատ:».

գ. ամբողջ տեքստում «գլխավոր վարչություն» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «Կոմիտե» բառով և դրա համապատասխան հոլովածներով.

դ. 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

ե. 11-րդ կետի «, որոնց գործառույթներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 16-ի «Օդային փոխադրումներին առնչվող ընթացակարգերի պարզեցման ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 249 որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան» բառերը հանել.

զ. 12-րդ կետի 1-ին պարբերության «գլխավոր վարչության կողմից՝ համաձայն օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի» բառերը փոխարինել «Կոմիտեի կողմից՝ համաձայն օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ մասի» բառերով.

է. 12-րդ կետի «տեսչական ստուգումներ» բառերը և դրանց համապատասխան հոլովածները փոխարինել «վերահսկողություն» բառով և դրա համապատասխան հոլովածներով.

ը. 12-րդ կետի «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) պարբերական՝ իրականացվում են տարեկան առնվազն 1 անգամ անրողրոմի համապատասխանությունը քաղաքացիական անրողրոմներին ներկայացվող պահանջներին վերահսկելու նպատակով:».

թ. 12-րդ կետի «բ» ենթակետի «կամ պատահարների» բառերը հանել.

ժ. 12-րդ կետը լրացնել նոր «գ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«գ) սեզոնային՝ ձմեռային ժամանակաշրջանին անրողրոմի պատրաստականությունը վերահսկելու նպատակով:».

ժա. լրացնել նոր 12.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.1. Եթե սույն կարգի 12-րդ կետով սահմանված վերահսկողությունների արդյունքում արձանագրվում են քաղաքացիական անրողրոմներին ներկայացվող պահանջներին և թռիչքների անվտանգությանն առնչվող անհամապատասխանություններ՝ Կոմիտեն իրավասու է դադարեցնել քաղաքացիական օդանավերի թռիչքները համատեղ օգտագործման և

համատեղ բազավորման ռազմական անբողոքներում և դրանք թույլատրելի շահագործողի կողմից անհամապատասխանությունները վերացնելուց հետո կատարված ուսումնասիրությունների դրական արդյունքների դեպքում՝ համաձայնություն տալու միջոցով:».

Ժբ. 18-րդ կետի 2-րդ պարբերությունը «Կառավարվող» բառից հետո լրացնել «անբողոքի» բառով.

Ժգ. 19-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Համատեղ բազավորման քաղաքացիական անբողոքներում շահագործողը տրամադրում է համապատասխան տարածք՝ ռազմական օդանավերի թռիչքների կառավարման խմբի աշխատանքները կազմակերպելու համար, իսկ դրա անհնարինության դեպքում՝ կառավարման խմբին ապահովում է աշխատանքային կետով, որի պատշաճ շահագործման պատասխանատվությունը վերապավում է կառավարման խմբին:».

Ժդ. 20-րդ կետի 1-ին պարբերության «4-րդ կետի համաձայն հաստատվում է գլխավոր վարչության» բառերը փոխարինել «5-րդ մասի համաձայն հաստատվում է Կոմիտեի կողմից» բառերով.

Ժե. 21-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«21. Համատեղ օգտագործման և համատեղ բազավորման ռազմական անբողոքներում վթարափրկարարական և հակահրդեհային անվտանգության ապահովումն իրականացվում է՝ համաձայն օրենսդրության և Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) թիվ 9137 (Դոկ.9137) ձեռնարկի մաս 1-ի:»:

3) որոշման N 2 հավելվածի «Արզնի» օդանավակայանի անբողոք» բառերը հանել:

2. 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ